

«Բուժհաստատությունների կառավարում» (Dental practice management) մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

«Բուժհաստատությունների կառավարում» (Dental practice management) MBA-ի կրթական ծրագիրը նպատակաուղղված է ստոմատոլոգիական ծառայությունների մատուցման ոլորտի ընկերություններում կառավարման, բիզնեսի վարչարարության և բուժական մասնագիտական ունակությունների համաժամանակյա ձևավորմանը: Բժշկական հաստատության կառավարիչը ոչ միայն կտիրապետի բիզնես վարչարարության և կառավարման հմտություններին, այլև օժտված կլինի բուժական գործի գիտելիքներով, ոլորտի իրավական կարգավորումների խոր իմացությամբ և կտիրապետի ոլորտում կիրառվող այն նորագույն տեխնոլոգիական լուծումներին, որոնք անհրաժեշտ են բժշկական հաստատությունների գործընթացների արդյունավետ կազմակերպման համար: Շրջանավարտին շնորհվում է **«Կառավարման մագիստրոս»** որակավորում:

«Բուժհաստատությունների կառավարում» (Dental practice management) MBA-ի ծրագիրը մասնագիտացված է ստոմատոլոգիական հաստատությունների կառավարման ուղղությամբ: Ծրագիրը մշակվել է առողջապահության ոլորտի մասնագետների ակտիվ մասնակցությամբ և միտված է ոլորտի կառավարման փորձի նորագույն զարգացումներին:

Ծրագրի տևողությունը 1 տարի է, դասապրոցերը նախատեսվում է իրականացնել շաբաթական երկու անգամ՝ շաբաթ և կիրակի օրերին, ժամը 16:00-20:00-ն՝ մոդուլային սկզբունքով: Մասնագիտական դասընթացներին զուգահեռ կամ դասընթացից հետո մագիստրոսը համապատասխան փորձառություն պետք է անցնի առաջատար բժշկական կենտրոններում և ստոմատոլոգիական կազմակերպություններում՝ ծանոթանալով այդ դասընթացի շրջանակներում ուսումնասիրված նյութի գործնական կիրառական ասպեկտների հետ:

Ծրագրի շրջանակներում որպես դասախոսներ ներգրավվելու են առողջապահության ոլորտի, բժշկական կենտրոնների և ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կառավարման, գնումների, ֆինանսների, բուժական գործի փորձառու մասնագետներ՝ «Ազգային բժշկական պալատ «ՄՄ» ՀԿ-ից, առողջապահության նախարարությունից և ծրագրի գործընկեր բժշկական կենտրոններից ու ստոմատոլոգիական կազմակերպություններից: Ակնկալվում է նաև միջազգային հայտնի կազմակերպություններից հրավիրյալ դասախոսների ներգրավում, ինչպես նաև ուսանողների մասնակցություն ոլորտի բազմաբնույթ միջոցառումներին:

Ուսումնական գործընթացի համար, բացի ՀՊՏՀ ենթակառուցվածքներից, կկիրառվեն նաև գործընկեր բժշկական հաստատությունների և ստոմատոլոգիական կենտրոնների ենթակառուցվածները, ապարատային և տեխնոլոգիական հնարավորությունները, գրադարանային ռեսուրսները, որոնց ուսանողները կձանոթանան հենց դասընթացների շրջանակներում՝ պարբերաբար կազմակերպվող փորձառությունների ընթացքում այցելելով ընկերություններ:

Ուսման վճարը ամբողջ ծրագրի համար 1.200.000 ՀՀ դրամ է:

Մասնագիտության նկարագիրը

«Բուժհաստատությունների կառավարում» (Dentalpractice managment) **MBA-ի** կրթական ծրագիրը պատրաստում է ստոմատոլոգիայի բնագավառում կառավարման և վարչարարության ունակություններով **կառավարման որակավորում ունեցող նոր տիպի մասնագետներ**, որոնք ունեն մեծ պահանջարկ՝ բժշկական կենտրոններում, բուժական, ախտորոշման և ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող կազմակերպություններում: Ներկայում առողջապահության ոլորտի նոր զարգացումների և կերպափոխումների ազդեցությամբ էապես վերափոխվում է բժշկական հաստատությունների կառավարման մոդելը՝ բուժական և տնտեսական բաղադրիչների առանձնացմամբ: Բժշկական կենտրոնները և ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող կազմակերպությունները պետական պատվերի ստացման, ապահովագրական ընկերությունների հետ համագործակցության հաստատման և մրցակցությանը դիմագրավելու համար ստիպված են հետևողականորեն բարելավել իրենց մատուցած ծառայությունների որակը, մշակել գործարար և շուկայավարարության ծրագրեր: Ոլորտի առանձնահատկությունը նրանում է, որ բացառապես նեղ բուժական գիտելիքներով կամ նեղ կառավարչական ունակություններով արդյունավետ լուծումներ հնարավոր չեն, ինչը շատ հաճախ առաջադրում է միջառարկայական ծրագրերի մշակման պահանջ: «Բուժհաստատությունների կառավարում» (Dental practice managment) **MBA-ի** կրթական ծրագիրը միտված է հենց առողջապահության, կառավարման և գործարար վարչարարության միջառարկայական տիրույթում հմտությունների ձևավորմանը:

Դասընթացները ներառում են առողջապահության ոլորտում կառավարման և վարչարարության հինգ հիմնական ուղղություններ՝ (1) ոլորտի իրավական կարգավորում (գնումների գործընթաց, ապահովագրություն, իրավա-օրենսդրական կարգավորում), (2) կառավարում և վարչարարություն (մարքեթինգ, բժշկական հաստատությունների ռազմավարական կառավարում, գործառնական կառավարում, առողջապահական զբոսաշրջություն և վարքագծային տնտեսագիտություն), (3) ֆինանսներ (գնումների գործընթաց, ֆինանսական հաշվառում, ֆինանսական մենեջմենթ), (4) առողջապահական տեխնոլոգիաներ (ախտորոշման և բուժական նորագույն տեխնոլոգիաներ, վիճակագրություն), (5) առողջապահական գործունեության կառավարում (ներհիվանդանոցային վարակների կառավարում, որակի կառավարում, դեղագործության կառավարում, առողջապահության կառավարում արտակարգ իրավիճակներում):

Աշխատանքի հնարավորություններ

Ներկայում աշխատաշուկայում առկա է այնպիսի մասնագետների պահանջ, որոնք խորությամբ տիրապետում են առողջապահության ոլորտին, բուժական գործին և միաժամանակ ունեն տնտեսության և բիզնեսի կազմակերպման և կառավարման իմացություն:

Կրթական ծրագիրը պատրաստվել է բուժհաստատությունների կառավարման ոլորտում մասնագիտական չափանիշներին համապատասխան՝ հաշվի առնելով արևմտյան բուհերի փորձը, և նպատակաուղղված է մասնագետների պատրաստմանը, որոնց պահանջարկը առողջապահության ոլորտում տարեցտարի

աճում է: Շրջանավարտներն աշխատաշուկայում կարող են զբաղեցնել բժշկական կենտրոնների և ստոմատոլոգիական ծառայություններ մատուցող կազմակերպությունների այնպիսի վարչական կամ կառավարչական հաստիքներ, որոնք պահանջում են առավել խորը և գիտական մակարդակի տնտեսագիտական, կառավարման և բուժական գործի համաժամանակյա տիրապետման ունակություններ:

Տվյալ ծրագրի շրջանակում ստոմատոլոգիական ծառայությունների ոլորտի առաջատար կազմակերպությունների և բժշկական կենտրոնների հետ հաստատված է սերտ համագործակցություն՝ ուսանողների փորձառության վայրի և հետագա աշխատանքի տեղավորման խնդիրների հարցում: